**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2019: «Ջուջևան գյուղում խմելու ջրի մատակարարման» ծրագրի եզրափակիչ արարողություն**

2022թ. հունիսի 15-ին Նոյեմբերյանում և Ջուջևանում տեղի ունեցավ «Ջուջևան գյուղում խմելու ջրի մատակարարման» մինչև 68,382 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2019) համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Նոյեմբերյան համայնքի ղեկավարի տեղակալ Միհեր Աղամյանը, Ջուջևան գյուղի վարչական ղեկավար պարոն Համբարձում Պետրոսյանը, «Համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ նախագահ տիկին Հասմիկ Ազիբեկյանը, ինչպես նաև այլ շահառուներ տարածքային գրասենյակից և համայնքից:

«Ջուջևան գյուղում խմելու ջրի մատակարարման» ծրագրի նպատակն է եղել նպաստել տարածաշրջանային կայուն զարգացմանը և բարելավել մարդկանց կենսամակարդակը: Մասնավորապես, Ջուջևան գյուղի ավելի քան 400 բնակիչ կարողացել է խմելու ջրի խնդրի լուծում ստանալ: Ծրագիրը ունենալու է շարունակական ազդեցություն, ինչի արդյունքում, շահառուների թիվը տարիների ընթացքում ավելանալու է:

Ծրագրի և արդյունքների մասին ներկայացում

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

ODA ցուցանակը գլխավոր ճանապարհին

Լուսանկար փականի դիտահորի ներսից